Գերայարգելոյ և. վանմագուեղի տեառն տեառն
Մխիթարայ Աստուածաբանուրեան վարդապետի և. Աբրայ Հօրն մերում

. . . . Ստամպօլցի գերձակ Ղազարն որ կամէր ծառայել մեզ, եկն ասա ի սէլանիկու . . . ի մսրայ եկեալ է ի սէլանիկ, ասէ թէ ի մսրը հացի օխան 6 փարայ տային, այժմ սակաւ ինչ աժնցաւ. իգմիր, հացն խիստ թանկ է, մսի օխան 8 փարայ, նմանապէս հալէպ և բոլոր անատոլի և ռումէլի և սէլանիկու ոչ (?) քաղաքն 60 տրամ սեաւ հացն 1 ստակ է. ասա ևս փոքրացուցին։ Ցանծին ֆունթն, այսինքն 180 տրամ տանծն 15 սօլտի է, նմանապէս սեղն և ձմերուկն. վերջապէս յէմշի հասրէդ եմ, նաև պանրի.. այսօր մին սեղ առնուլ եառու, բայց յոյժ ստրչացայ, զի կարի թանկ գնեալ էին, այսինքն 12 սօլտի, և յետ հացին գնալոց բարկանալոց եմ գնողին . . . . : . . Ի ներքոյ արեգական ոչ գոյ սոցին [ժողովրդեան Պելկրատու] նման, զի կարի տարբերք են ի հայական կացութենէ։ Համանգամայն հայ են և համանգամայն փոանկք, համանգամայն ուղղափառ են և համանգամայն արտուղի...։ .. եկեղեցւոյ տեղն չափեցին և զտէքրէթօն առին, և այժմ ոչ սկսին, այլ ի գալնան...։ .. քանի մի օր կայ, որ ստամպօլու գիր եկն ասա, յորում ծանուցանէ թէ զօրքն թուրքաց խորտակեալ և փախուցեալ են զզօրս պարսից, ի վիտին? ուրախութիւն ևս արարեալ են, նաև սոյնս ճշմարիտ է, զի քառասուն հազար թաթարք բռամբք և ընդդէմ կամաց մոսկովին անցեալ և գնացեալ ի ղզլպաշու հողն, տակաւին ոչ է յայտ, թէ ի կողմն ի սպահանու գնան և թէ ի պաղտատու . . . : . . . վերոգրեալ ղազարոսն ասաց թէ ճէզայիրցիք խնդրեցին ի թագաւորէն 2 պէյլիք նաւ և նա յօժարութեամբ չնորհեաց նոցա և ի ճանապարհին պատճառաւ մրրկան նոյն 2 նավքն, նաև իւրեանց նավուքն խորասոյզ եղեալ են, չորսն ևս անյայտ է, չեն գիտեր իսկապէս թէ նոքա ևս խորասոյզ եղեն թէ ոչ, այլ միայն զչորսն նաւն տեսաք ի միում նաւահանգստի, վերջապէս 12 նաւուց չորս կան, նոքա ևս երկնչին ելանել անտի, զի ի մոռայու ջրերն 12 նավք սպանեայու չրջին և որոնեն զսոսա։ Նաև զայս ևս ասաց, 3 փոք[ր] նաւ մալթէզի մերձ ուզիտու առին զռեալթանավն տաճկին, տումէնն և սէրէնն կոտորելով, գնաւարարքն, նաև յետ առնլոյ զկահն և կարասին նոյնոյ նաւուն ջրասոյզ արարեալ են գնա։ Դա և առեալ են զմի պատուական չէքտիրի, և զմի փոքր թագաւորական նաւ, որ է մեծագոյն քան զքափէթան, և վասն այսր պատճառի այժմ զպատան փաչան բազմօք նաւուք չրջի ի սպիտակ ծովն . . . . :

Գերայարգութեան քում ծառայ
Եղիա վարդապետ

Ցամի փրկութեան մերոյ
1733 Օգոստոսի 29
[Պելկրատ]

ԾԱ.

Եկեղեցին՝ որուն կառուցման մասին կը խօսի Հ. Եղիա՝ Պելկրատու Հայոց կը պատկանի։

Ապա կը նկարագրէ Լեհաց քաղաքական շփոթութեան մէկ հետաքրքրական դրուագը, որ տեղի կ'ունենայ՝ ինչ որ կ'երևի՝ իրենց Սաքսոն Օգոստոս Գ.ի թագաւորութեան սկզբնաւորութեան շրջանին (1733–63)։